պետք՝ 2 այլ ընկերօք ելին յԵրուսաղէմէ գնալ յաչխարհն Եթովպացւոց, իբր գտանել օգնութիւն Աթոռոյն. և իբրեւ հասին 'ի Բերբրոն, զի ճանապարհ Ապուղօշի և Գազայու խափանեալ էր, կալան զնոսա Շէյխք տեղւոյն եւ արգելին՝ և առեալ 'ի նոցանէ 180 դահեկան՝ արձակեցին. և նոցա ընկերացեալ ուղտապանաց հասին 'ի Սվէյիշ և անտի նաւեցին 'ի Ճիտտէ. տագնապեցան անդ 'ի սաստիկ ջերմութենէ կլիմայի երկրին եւ 'ի նուազութենէ հացի, եւ անտի նաւեալ հասին 'ի Նաւահանգիստն Մասուայ. զկնի երից ամսոց ծախեալ ըռեալս 400, եւ կարօտեալ դրամոց վաճառեցին 'ի կէս գին զերկու մատանիս և զմի ժամացոյց, 300 ըռեալ, և անտի դէմ եդին գնալ 'ի սահմանս Հապէշաց, ուտելով զալիւր Բէֆ անուն խոտոյ, սեաւ և ժահահոտ։ Տեսուչ վարդապետն Հապէշաց՝ Ապտիլ Մէսիհ, որ նստէր յԵրուսաղէմ, գրեաց յԵգիպտոս առ Պատրիարքն Ղպթոց, թէ գնացին աստի ամենք 'ի վարդապետաց Հայոց յԵթովպիա յափշտակել զիշխանութիւն ձեր և զվիճակ՝ և աքսորել զեպիսկոպոսն որ անդ, և իբրեւ թէ իշխանք երկրին գրեալ իցեն յԵրուսաղէմ առ Հայս և խնդրեալ 'ի նոցանէ զառաջնորդ, չընդունիլ այնուհետեւ զօք 'ի Ղպթոց։ Պատրիարքն փութանակի ազդ արար զկրսն եպիսկոպոսի տեղւոյն, որոյ անունն էր Գէորգ, և պատուիրեաց նմա ըմբռնել զվարդապետսն, չարչարանօք և լկանօք դարձուցանել յետս. զայս ամենայն յետոյ պատմեաց վարդապետաց Թարգման եպիսկոպոսին Միքայէլ անուն։ Եպիսկոպոսն առաքեաց 'ի սահմանագլուխն զարս երիս, եւ կալեալ զնոսա կապեցին երկաթի կապանօք եւ թողին անդ 'ի լեռն, յետ քառասուն աւուրց լուեալ իշխանին Ատուայի ազատեաց զնոսա և տարաւ 'ի քաղաք իւր կողոպտեալ զինչս նոցա, բաց 'ի հանդերձից, զոր ըզգեցեալ էին. ետ ընթեռնուլ զկոնդակ նոցա, և իմացեալ ծանեաւ թէ յոր գործ եկեալ էին, և պահեաց զնոսա խընամօք առ իւր, և տայր նոցա մի եզ 'ի կերակուր բաւական երկուց աւուրց, և երբեմն հրաւիրէր զնոսա 'ի սեղան իւր։ Լուեալ զայս եպիսկոպոսին կատաղեցաւ խպառ, և ելեալ գնաց առ իշխանն, և խնդրէր զվարդապետսն տալ 'ի ձեռն իւր զի կուրացուցէ զաչս նոցա, եւ նա ոչ էառ